ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ N 1

21.04.2017թ գ.Զոլաքար

Տեղի ունեցավ համայնքի ավագանու արտահերթ նիստ, որին մասնակցում էին ավագանու 11 անդամներից 10-ը՝ Հ.Ղազարյանը, Կ.Տոնեյանը, Ա.Պողոսյանը, Ն.Սիմոնյանը, Ա.Գասպարյանը, Գ.Գալստյանը, Ն.Գրիգորյանը, Հ.Ավետիսյանը Ա.Ավետիսյանը և Գ.Լ.Գրիգորյան: Նիստը վարում է գյուղապետ՝ Ա.Ղազարյանը արձանագրեց Մ.Արուճյանը:

Օրակարգ՝

1. Արտահերթ նիստի օրակարգի հաստատում
2. Անհետաձգելի գնում կատարելու մասին (զեկ. Ա.Ղազարյան):

1.) Լսեցին-ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը

Որոշում N 1

N 1 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով

Ավագանին որոշեց

1. Հաստատել 2017թ. ապրիլի 21-ի N 1 արտահերթ նիստի օրակարգը
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից

ավագանի կողմ -10

1. Հ.Ղազարյան 2. Կ Տոնեյան

3. Հ.Ավետիսյան 4. Ն.Սիմոնյան

5. Հ.Գալստյան 6. Ա.Պողոսյան

7. Ն.Գրիգորյան 8. Գ.Լ.Գրիգորյան

9. Ա.Գասպարյան 10. Ա.Ավետիսյան

Զոլաքար համայնքի ղեկավար Ա.Ղազարյան

2.) Լսեցին-անհետաձգելի գնում կատարելու մասին հարցը.

Զեկուցողը ներկայացրեց, որ Համաշխարհային բանկի << Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավում>> ծրագրի շրջանակներում համաձայն <<Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետև՝ Պատվիրատու) և <<Կապավոր>> ՍՊԸ-ի

(այսուհետև կապալառու) միջև կնքված թիվ CW-NCB-LRNIP-AF-2016/2 պայմանագրի և հաստատված ժամանակացույցի իրականացվում է Մարտունի-Վաղաշեն-Վարդենիկ միջհամայնքային ավտոճանապարհի ասֆալտապատման աշխատանքներ, որը իր մեջ ներառում է նաև Զոլաքար համայնքի 2-րդ և 3-րդ փողոցները: <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի կողմից իրականացվող ծրագրով նախատեսվում էր 2017թ.-ին 2-րդ փուլով կատարել համայնքի 2-րդ և 3-րդ փողոցների մայր սնուցող ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքները, սակայն նշված ծրագիրը ֆինանսական միջոցների բացակայության պատճառով անավարտ է մնացել, ուստի անհրաժեշտություն է առաջացել համայնքի միջոցների հաշվին իրականացնել նշված ծրագիրը:

Որոշում N 2

Անհետաձգելի գնում կատարելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով <<Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության 19.04.2017թ. N 286 գրությունը

Ավագանին որոշեց

1. Ելնելով անհրաժեշտությունից ավագանին տալիս է իր համաձայնությունը համայնքի 2-րդ և 3-րդ փողոցներով անցնող խմելու ջրի մայր սնուցող ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքները իրականացնելու համար:
2. Համայնքի ղեկավարին առաջարկել խնդիրն ընդունել պատշաճ ձևով և սեղմ ժամկետներում պատվիրել նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և կատարել անհետաձգելի գնում նշված հատվածում խմելու ջրի ջրամատակարարման համակարգերի վերակառուցման աշխատանքները իրականացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ավագանի կողմ -10

1. Հ.Ղազարյան
2. Կ Տոնեյան
3. Հ.Ավետիսյան
4. Ն.Սիմոնյան
5. Հ.Գալստյան
6. Ա.Պողոսյան
7. Ն.Գրիգորյան
8. Գ.Լ.Գրիգորյան
9. Ա.Գասպարյան
10. Ա.Ավետիսյան

Զոլաքար համայնքի ղեկավար՝ Ա.Ղազարյան